ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«31» դեկտեմբերի 2024 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՄԱՆՈՐՅԱ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ

Սիրելի հայրենակիցներ, Ստեփանավան, Կաթնաղբյուր, Ուրասար և Արմանիս բնակավայրերի բնակիչներ

Մոտենում է Նոր տարին՝ 2025 թվականը և մենք ամփոփում ենք 2024 թվականին կատարված մեր աշխատանքներն ու ձեռքբերումները:

Անցնող տարին մեր համայնքի համար նշանավորվեց կարևոր բարեփոխումներով, առանցքային ծրագրերով և նոր ու հեռանկարային զարգացումներով:

Անդրադառնալով մեր ձեռքբերումներին, ուրախությամբ արձանագրում ենք Աշոտաբերդ թաղամասի վերակառուցման մեկնարկը: Պետական այս կարևորագույն ծրագրով կլուծվի երկրաշարժից հետո ժամանակավոր կացարաններում ապրող շուրջ 300 ընտանիքի կեցության հարցը:

2024-ին համայնքում իրականացվել և ավարտվել են լայնածավալ բարեկարգման աշխատանքներ, այդ թվում ճանապարհաշինություն, բազմաբնակարան շենքերի ջերմամեկուսացում, տանիքների վերանորգում, կոյուղագծերի և ջրագծերի արդիականացում, պուրակների բարեկարգում:

Տարին բարեհաջող էր հատկապես համայնքի վարչական բնակավայրերի համար: Պետական միջոցներով ասֆալտապատվեց տարիներով դժվարանցանելի համարվող Արմանիս-Ուրասար-Կաթնաղբյուր ճանապարհը, սուբվենցիոն ծրագրով նշված բնակավայրերում անցակացվեց գազաֆիկացում, Ուրասար համայնքում առաջին անգամ սկսեց գործել մանկապարտեզը: Շուտով շահագործման կհանձնվեն նաև Արմանիս և Կաթնաղբյուր բնակավայրերի մանկապարտեզները: Բնակավայրերում առաջիկայում կմեկնարկեն նաև սուբվենցիոն ծրագրով իրականացվող ջրամատակարարման ցանցերի կառուցման աշխատանքները:

Ուրախությամբ պետք է փաստել, որ 2024 թվականին կյանքի կոչված, ինչպես նաև 2025 թվականի համար նախատեսված բոլոր ծրագրերը հնարավոր են դարձել ինչպես ՏԻՄ-ի համակարգված աշխատանքի, այնպես էլ պետության բարձր աջակցության շնորհիվ, որը բոլորիս համար անգնահատելի է:

Անցնող տարում նոր զարգացում ստացավ Ստեփանավան համայնքի և միջազգային կառույցների հետ փոխգործակցությունը, որի շրջանակներում հուշագրեր ստորագրվեցին Ֆրանսիայի Դեսին -Շարպյո և ԱՄՆ Մոնտանա նահանգի Հելենա քաղաքների հետ:
Ստեփանավան համայնքը ՄԱԶԾ գործընկերների հետ մշակեց իր 2022-2032 թթ զարգացման ռազմավարական ծրագիրը, որով առաջնորդվելու է աշխատանքնային գործունեության ընթացքում և որի ռազմավարական ուղղությունների իրագործմամբ էլ զարգանալու են համապատասխան ոլորտները:

Սիրելի ստեփանավանցիներ, որպես համայնքի ղեկավար, շնորհակալ եմ յուրաքանչյուրիդ՝ համայնքի զարգացման գործում ունեցած ձեր մասնակցության և ակտիվ աջակցության համար:

Համայնք-բնակիչ ամուր համագործակցության շնորհիվ Ստեփանավանը վստահ քայլում է հետագա զարգացման ուղիով, և ես հավատացած եմ, որ մեր հաջողությունները պետք է բազմապատկվեն, որովհետև ունենք ամուր կամք և վճռականություն՝ ապրել բարեկարգ, հարմարավետ և արագ զարգացող համայնքում:

Ամփոփելով անցնող տարվա ձեռքբերումները և ձգտելով ապահովել դրանց շարունակականությունը՝ մաղթում եմ, որ գալիք 2025 թվականը մեր երկրի համար լինի խաղաղ և կայուն զարգացման, իսկ մեր համայքների համար՝ նոր ձեռբերումների ու հաջողությունների տարի:

Թող 2025 թվականը բոլորիս բերի առողջություն, բարօրություն և եռանդ՝ նոր նվաճումների համար:

Թող ձեր օջախներում հնչող բոլոր բարեմաղթանքներն ու երազանքները դառնան իրականություն:

Սեր և համերաշխություն ձեր ընտանիքներին:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**